ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2-2

**ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով շինարարական աշխատանքների կառավարման համակարգի ծրագրային ապահովման ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 03.07.2026թ.
ժամը 11:30

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Կ. Անտոնյան |
| Հանձնաժողովի անդամներ ՝ | Մ. Նալբանդյան |
| | Շ. Իսախանյան |
| | Գ. Ծատուրյան |
| | Է. Առուստամյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Հարությունյան |
| Բացակայում էին | Մ. Աղայանց |
| Հանձնաժողովի անդամներ ՝ | Ա. Հյուսիսյան |

**1. Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին**
(Կ. Անտոնյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 01.07.2026թ. ծանուցվել է <<ԻՆՍՓԱՅՐԴ>> ՍՊԸ և <<ՍՄԱՐԹ ԱՅԹԻ ՍԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ կոնսորցիումին՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

1.2 Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց <<Լոկատոր>> ՓԲԸ-ի, <<ԷԼԻՔՍ>> ՍՊԸ-ի և <<ԻՆՍՓԱՅՐԴ>> ՍՊԸ և <<ՍՄԱՐԹ ԱՅԹԻ ՍԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0

**2. Նախաորակավորված մասնակիցների ցանկը հաստատելու մասին**
(Կ. Անտոնյան)

2.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը, ինչպես նաև գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի նախաորակավորված մասնակիցների ցանկը՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

| Հ/հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | <<Լոկատոր>> ՓԲԸ |
| 2 | <<ԷԼԻՔՍ>> ՍՊԸ |
| 3 | <<ԻՆՍՓԱՅՐԴ>> ՍՊԸ և <<ՍՄԱՐԹ ԱՅԹԻ ՍԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ կոնսորցիում |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0

**3. ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով երկու փուլ մրցույթի 1-ին փուլի հրավերի տեքստը հաստատելու և նախաորակավորված մասնակիցներին այն տրամադրելու մասին**

(Կ. Անտոնյան)

3.1 Հիմք ընդունելով նախաորակավորման ընթացակարգի արդյունքները և ղեկավարվելով Կարգի 13-րդ բաժնի պահանջներով, գնահատող հանձնաժողովը որոշեց.

- հաստատել ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով երկփուլ մրցույթի 1-ին փուլի հրավերը,
- երեք աշխատանքային օրվա ընթացքում 1-ին փուլի հրավերը տրամադրել բոլոր նախաորակավորված մասնակիցներին, էլեկտրոնային փոստի միջոցով՝ միաժամանակյա ծանուցմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

**4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

(Կ. Անտոնյան)

4.1 ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 1-ին փուլի հայտերի բացման օրը՝ ժամը 11:00-ին (բացման նիստի օրը կնշվի հրավերի ծանուցման մեջ) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Կ. Անտոնյան

Անդամ՝ ---------------------------------------- Մ. Նալբանդյան

---------------------------------------- Շ. Իսախանյան

---------------------------------------- Գ. Ծատուրյան

---------------------------------------- Է. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ն. Հարությունյան